ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ **01 նոյեմբերի 2022 թվական**

Արտաշատի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի «Բարեկարգ Արտաշատ», «Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ» և «Արտաշատ քաղաքի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնները զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

1.Բարձրագույն կրթություն

2.Համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ

3.Իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտեր/:

4.Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

ա/ տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

բ/ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն

գ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

դ/ աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ

ե/ ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն

զ/ առնվազն մեկ օտար լեզվի իմացություն

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

ա/ դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ/ տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

գ/ օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայության.

դ/ դատապարտվել է հանցագործության կատարման համար և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

ե/ զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել.

զ/ ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են.

է/ 65 տարին լրացած քաղաքացիները:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմ են ներկայացնում

1.դիմում.

2.մեկ լուսանկար /3*4/.

3.քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4.ինքնակենսագրություն.

5.անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի/արական սեռի անձինք՝ նաև զին. Գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի/ պատճենները.

6.տեղեկանք՝ մշտական բնակության վայրի.

7.հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր/դրանց առկայության դեպքում/:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի դեկտեմբերի 1-ին ժամը 11:00-ին Արտաշատի համայնքապետարանում:

Դիմողները փաստաթղթերը կարող են ներկայացնել աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 09:00-ից մինչև 18:00-ն նշված հասցեներից որևէ մեկով՝

1. **<u>Արտաշատի համայնքապետարան՝</u>**
   Ք.Արտաշատ Օգոստոսի 23-ի փողոց թիվ 62,
   4-րդ հարկ, քարտուղարության անձնակազմիկառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին
   Հեռախոս /0235/2-36-39
2. **<u>Արարատի մարզպետարան</u>**
   Ք.Արտաշատ Օգոստոսի 23փողոց թիվ 60
   5-րդ հարկ, ՏԻ և ՀԳՄ հարցեով վարչություն
   Հեռախոս՝ /0235/2-34-65

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է 2022թվականի նոյեմբերի 21-ը:

Արտաշատ համայնքի ղեկավար՝ **Կ. Մկրտչյան**